Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ս. Խ. Հ.

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Statuts

De la Société de la Croix Rouge de la République Socialiste Soviétique d'Arménie.

ԵՐԵՎԱՆ
1924



375-4Q7

ԱՐՀ
375

362.19(47.925)

Հ. Ս. Խ. Հ.

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Statuts

De la Société de la Croix Rouge de la République Socialiste Soviétique d'Arménie.



1924

Ընդունված է Հ. Ս. Խ. Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 24 Մայիսի 1922 թվի նիստում եւ հաստատված է Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից 1 մարտի 1924 թիվ.

Հոդ. 1.

Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությունը վորդեգրում է Միջազգային Կարմիր Խաչի սկզբունքները, համաձայն 1863—1907 թ. թ. միջազգային համաձայնագրերի յեվ միջազգային այլ վորոշումների:

Հոդ. 2.

Ընկերությունը գտնվում է Հայաստանի կառավարության հովանավորության ներքո յեվ վայելում է նրա տված արտոնություններ:

Հոդ. 3.

Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության նպատակն է.—

ա) Խնամել հանրապետության հիվանդ ու վիրավոր զինվորներին, ինչպես նայեվ ոտարյերկրյա այն հիվանդներին ու զինվորներին, վորոնք նրա գործունեության շրջանում կլինեն:

բ) Ամեն տեսակ օգնություն ցույց տալ հաշմանդամներին, ընդհանուր աղետներից յեվ համաճարակներից, մասնավորապես մալարիայից տառապողներին։

Ընկերությունը կարող է վերոհիշյալ նպատակներով իր օգնության գործը տարածել նայեվ յերկրից դուրս։

Հոդ. 4.

Առաջադրյալ նպատակներին հասնելու համար Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերությունը **նախաձեռնում է բոլոր օրինական գործողությունները**, կազմակերպում է իր նպատակներից բղխող ամեն տեսակ հիմնարկություններ, ձեռնարկություններ յեվ այլն։

Հոդ. 5.

Ընկերությանը կարող են անդամագրվել բոլոր չափահաս քաղաքացիները՝ առանց ազգության կամ դավանանքի յեվ սեռի խտրության այլ յեվ պետական, հասարակական հիմնարկություններն ու կազմակերպությունները։

Հոդ. 6.

Անդամները՝ վճարում են տարեկան 50 կ. վոսկեդրամ տարվա սկզբին, իսկ հիմնարկություններն ու կազմակերպությունները՝ վճարում են 10 ռուբլի։

Հոդ. 7.

Ընկերության գործող մարմիններն են—
ա) Ընդհանուր ժողովը,
բ) Գլխավոր վարչությունը,
գ) Վերստուգիչ հանձնաժողովը։

Հոդ. 8.

Ընդհանուր ժողովները լինում են հերթական եւ արտակարգ եւ տեղի են ունենում Հայաստանի մայրաքաղաքում։ Հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան վոչ պակաս, քան մի անգամ, վոչ ուշ, քան ապրիլի մեկը, իսկ արտակարգ ընդհանուր ժողովը կայանում է ամեն անգամ, երբ՝ ա) գլխավոր Վարչությունը գտնում է այդ անհրաժեշտ, բ) երբ պահանջում է Վերստուգիչ Հանձնաժողովը, եւ գ) երբ առաջվում է ընկերության անդամների քառորդից ավելի՝ գրավոր պահանջն այդ մասին։

Հոդ. 9.

Ժողովը համարվում է որինական, երբ ժողովին մասնակցում են առնվազն անդամների մեկ երրորդը։ Յերկրորդ անգամ հրավիրված ընդհանուր ժողովն, որինական է համարվում՝ անկախ ներկա յեղողների թվից։

Հոդ. 10.

Ընդհանուր ժողովի իրավասության են յենթարկվում հետեվյալ խնդիրները. ա) Գլխա-

վոր Վարչության յեվ յենթակա հիմնարկությունների գործունեության համար կանոններ հաստատել, բ) քննել Գլխավոր Վարչության ընդհանուր հաշվետվության Ընկերության գործունեության յեվ միջոցների մասին, գ) լուծել ընդհանուր բնավորություն կրող կարեվոր խնդիրները, դ) ընտրել Գլխավոր Վարչության յեվ Վերատուգիչ Հանձնաժողով, ե) հաստատել Ընկերության բյուջեի նախագիծը։

Հոդ. 11.

Ընդհանուր ժողովի գբաղմունքի որակարգը կազմում է Գլխավոր Վարչությունը յեվ հայտարարում է մեկ ամիս առաջ ի գիտություն հանրության։

Յեթե ընկերության անդամները կամենան առաջարկ մտցնել ընդհանուր ժողովին քննության համար, պարտավոր են այդ առաջարկը ներկայացնել Գլխավոր Վարչությանն ընդհանուր ժողովի գումարման որից առնվազն յերկու շաբաթ առաջ։

Հոդ. 12.

Ընդհանուր ժողովում քննված խնդիրները վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ընտրությունները կատարվում են բաց բվեարկությամբ, ձայների համեմատական մեծամասնությամբ։

Հոդ. 13.

Ընդհանուր ժողովը վարում է իր նախագահը, իսկ արձանագրությունը կազմում է քարտուղարությունը, որոնք վավերացնելով ժողովի արձանագրությունն ու որոշումները, հանձնում են Գլխավոր Վարչության:

Հոդ. 14.

Ընդհանուր ժողովն ընտրում է մեկ տարի ժամանակով յոթը անդամից յուր յերկու փոխանդամից բաղկացած Վերատուգիչ Հանձնաժողով, որի պարտականությունն է քննել յուր տարեգրի Գլխավոր Վարչության դրամական յուր այլ հաշիվները ու գործառնությունները:

Հոդ. 15.

Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության իրավական անձն է և ի դեմս իր Գլխավոր Վարչության, որը վարում է տալիս կանոնադրության յուր ընդհանուր ժողովի որոշումների սահմաններում ընկերության բոլոր գործերը:

Հոդ. 16.

Գլխավոր Վարչությունը բաղկացած է ոչ պակաս քան 11 անդամից յուր 5 փոխանդամից, որոնք փոխարինում են կազմից դուրս յեկած անդամներին: Գլխավոր Վարչությունն ընտրվում է 1 տարի ժամանակով: Հրաժարված անդամները, վերընտրելի յեն:

Գլխավոր Վարչության անդամակցում և Առժողկոմը կամ իր ներկայացուցիչը։

Հոդ. 17.

Գլխավոր Վարչությունն իրավունք ունի կոոպտացիայի միջոցով ուժեղացնել իր կազմը գիտակ անձնավորություններով, հրավիրելով առաջավեն չորս հոգի։

Հոդ. 18.

Գլխավոր Վարչության նիստերը գումարվում են առնվազն յերկու ամիսը մեկ անգամ։ Ավելի հաճախ ժողովներ գումարվում են նախագահության հայեցողությամբ կամ վարչության հինգ անդամների պահանջմամբ։

Հոդ. 19.

Գլխավոր Վարչության վորոշումները որինական լինելու համար ժողովին ներկա պիտի լինեն վոչ պակաս, քան Գլխավոր Վարչության անդամների կեսը։

Հոդ. 20.

Գլխավոր Վարչությունն ընտրում է իր միջից նախագահություն՝ բաղկացած մեկ նախագից, յերկու փոխնախագահներից, մեկ բարտուղարից յեվ մեկ գանձապահից։

Նախագահությունը Գլխավոր Վարչության գործադիր մարմինն է, վորին իրավունք և տրը-

վում անհետաձգելի նկատված դեպքում կատարել բոլոր անհրաժեշտ գործառնությունները, զեկուցելով նրանց մասին Գլխավոր Վարչության ընդհանուր նիստին։

Հոդ. 21.

Գլխավոր Վարչությունը կարող է նշանակել արտասահմանում ընկերության ներկայացուցիչներ յեվ **լիազորներ**, վորոնք առաջնորդվում են Գլխավոր Վարչության տված հրահանգներով յեվ պատասխանատու յեն Գլխավոր Վարչության առաջ։

Հոդ. 22.

Օտար յերկրներում կազմված Հայ Կարմիր Խաչի Ընկերությունները կարող են համարվել Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության ճյուղերը, վորի համար ամեն մի դեպքում Գըլխավոր Վարչությունը հատուկ վորոշում է կայացնում։

Հոդ. 23.

Ընկերությունը գավառներում ունի իր ճյուղերը, վորոնք կազմվում են միյեվնույն հիմունքներով յեվ առաջնորդվում են միյեվնույն կանոններով, վոր հաստատված են կենտրոնի համար։ Ճյուղերի վարչությունը բաղկանում է 4-5 անդամներից յեվ յերկու փոխանդամից, իսկ Վերստուգիչ Հանձնաժողովը՝ 3 անդամից յեվ յերկու փոխանդամից։

Հոդ. 23.

Յեթե վորևէ ճյուղ դադարեցնում և իր գործունեությունը, նրա բոլոր գործերը, շարժական յեվ անշարժ գույքն անցնում են Գլխավոր Վարչության։

Այս բոլորը կրկին հետ և տրվում նույն ճյուղին, յեթե վերջինս իր դադարման որից մինչեվ մեկ տարի վերսկսում և իր գործունեությունը։

Հոդ. 25.

Ճյուղերի վարչությունները Գլխավոր Վարչության կողմից վավերացվելուց հետո, վարում են իրենց տեղական գործերն ըստ տեղական ընդհանուր ժողովի վորոշումների յեվ համաձայն Գլխավոր Վարչության հրահանգների։

Հոդ. 26.

Գլխավոր յեվ տեղական վարչությունների ձեռքի տակ յեղած գումարները բաժանվում են չորս կարգի.

ա) Ծախսելի գումար՝ բնակերության ընթացիկ ծախսերի համար,

բ) Պահեստի դրամագլուխ՝ պատերազմի ժամանակվա պետերի համար,

գ) Հաշմանդամ զինվորականներին նպաստի դրամագլուխ յեվ,

դ) Հատուկ նպատակների համար հատկացված կամ ներքարկված գումարներ, վոր գոր-

ծադրվելու չեն միմիայն հիշյալ նպատակներին համար։

Հոդ. 27.

Տեղական վարչություններն ամեն տեսակ դրամական յեկամուտների 25 տոկոսը բացառությամբ տեղվույն վրա գործադրվելիք հատուկ նպատակի համար յեղած նվերների, ուղարկում են Գլխավոր Վարչության, ընկերության ընդհանուր ծախսերի համար։

Հոդ. 28.

Գլխավոր յեվ տեղական Վարչությունների գումարները պահվում են Պետական բանկերում կամ նրանց մի վորեվե բաժանմունքում, ցպահանջ կամ ընթացիկ հաշվով, բանկից հարկ յեղած յեղանակով փող վերցնելու համար։ Պահանջագիրը պետք է առորագրեն նախագահը կամ փոխ-նախագահը յեվ գանձապահը։

Հոդ. 29.

Գլխավոր յեվ տեղական վարչությունները պարտավոր են յուրաքանչյուր տարվա վերջին ընդհանուր ժողովների գումարումից առնվազն մեկ ամիս առաջ իրենց գործունեության ինչպես դրամական, նույնպես յեվ մթերային, լրիվ ու կանոնավոր զրավոր հաշվետվություն ներկայացնել համապատասխան Վերատեսչ Հանձնաժողովներին. վերջիններս իրենց յեզրակացությունը զեկուցանում են ընդհանուր ժողովին։

Հոդ. 30.

Ճյուղերի վարչությունները պարտավոր են իրենց տարեկան հաշվետվությունն ընդհանուր ժողովի յուր Վերատուչիչ Հանձնաժողովի յուրաքանչյուր հետ միասին ներկայացնել Գլխավոր Վարչության, հաջորդ տարվա փետրվարի 1-ից վոչ ուշ։

Հոդ. 31.

Տեղական վարչությունները, ինչպես նայելով առհասարակ Գլխավոր Վարչության յուրաքանչյուր հիմնարկությունները, վորոնք սահմանված ժամանակից յերկու ամիս հետո դեռևս ներկայացրած չեն լինի իրենց հաշվետվությունը, համարվում են գոյություն ունենալուց դադարած։ Այսպիսի դեպքերում կիրառվում և սույն կանոնադրության 24 հոդվածը։

Հոդ. 32.

Գլխավոր Վարչությունը թե՛ կենտրոնի յուր թե՛ ճուղերի ընդհանուր հաշվետվությունը կազմելով, հրատարակում և առանձին կամ լրագրերում ի գիտություն հանրության։

Հոդ. 33.

Հ. Կ. Խ. Ընկերության խորհրդանշանն և հավատարաթեվ ուղղանկյունի կարմիր խաչ, սպիտակ տեղի վրա։ Այդ խորհրդանշանի գործածելու իրավունքը Հայաստանում պատկանում և

բացառաբար Հին Ընկերության, որի Գլխավոր Վարչությունը կարող և արտոնել նրանից ոգտվելու այն հիմնարկությունները ու անձնավորությունները, որոնք ծառայում են Կարմիր Խաչի նպատակներին։

Հոդ. 34.

Ընկերությունն ունի իր կնիքը վերոհիշյալ նշանով. «Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերություն» մակագրությամբ յեվ Գլխավոր կամ այս ինչ ճյուղի տեղական վարչության հիշատակությամբ։

§ 1.

La Société de la Croix Rouge de la R. S. S. d'Arménie est organisée selon les principes de la Société Internationale de la Croix Rouge, adoptés par les Conventions Internationales et autres règlements internationaux établis entre 1863 et 1907.

§ 2.

La Société se trouve sous le patronage du Gouvernement Arménien et jouit des privilèges qui lui sont accordés.

§ 3.

La Société de la Croix Rouge de la R. S. S. d'Arménie a pour but:

a) de soigner les malades et les blessés militaires du pays, ainsi que ceux d'autres pays qui se trouveraient dans le rayon d'activité de la Société;

b) d'assister les infirmes et les victimes des calamités générales, des épidémies et, particulièrement, de la malaria. La Société peut étendre son activité dans ce même but, au delà des frontières du pays.

§ 4.

Pour atteindre ces buts la Société de la Croix Rouge de la R. S. S. d'Arménie prend l'initiative auprès les autorités pour obtenlr les droits nécessaires, organise des institutions auxiliaires de toutes sortes, de diverses entreprises etc.

§ 5.

Tout citoyen majeur, sans distinction de nationalité, de religion et de sexe, ainsi que les Etablissements d'Etat et les Institutions publiques peuvent devenir membres de la Société.

§ 6.

Le montant de la cotisation annuelle est de 50 copecks en or, pour les membres de la Société, payable au commencement de l'année, et de 10 roubles, pour les Etablissements et les Institutions.

§ 7.

Les organes de la Société sont:

a) L'Assemblée générale.
b) L'Administration générale.
c) La Commission de Revision.

§ 8.

Les Assemblées générales sont alternatives ou extraordinaires et sont convoquées dans la

capitale de l'Arménie. L'Assemblée générale alternative est convoquée au moins une fois par an, au plus tard, le 1-er avril; les assemblées extraordinaires sont convoquées:

a) par décision de l'Administration générale.

b) sur la demande de la Commission de Revision, et.

c) sur la demande, faite par écrit, de plus qu'un quart des membres de la Société.

§ 9.

L'assemblée est considérée réglementaire si au moins un tiers des membres est présent. En seconde convocation l'assemblée est considérée réglementaire sans prendre en considération le nombre des présents.

§ 10.

Les attributions de l'Assemblée générale sont:

a) l'approbation des règlements de la gestion de l'Administration générale et des institutions qui lui sont subordonnées.

b) l'examen du compte-rendu de l'Administration général, pour l'activité et les ressources de la Société.

c) la solution des questions importantes de caractère général.

d) élection de l'Administration générale et de la Commission de Revision.

e) l'approbation de projet du budjet de la Société.

§ 11.

L'ordre du jour de l'Assemblée générale est composé par l'Administration générale et rendu public un mois à l'avance. Les membres de la Société qui ont une proposition à soumettre à l'examen de l'Assemblée générale, sont tenus de la présenter à l'Administration générale au moins deux semaines avant le jour de la réunion.

§ 12.

A l'Assemblée générale les décisions sont prises à la majorité simple des voix; les élections se font par la votation ouverte à la majorité relative.

§ 13.

L'Assemblée générale est dirigée par son président; les procès-verbaux sont tenus par le secrétaire. Le président et le secrétaire approuvent les procès-verbaux et les décisions des séances et les soumettent à l'Administration générale.

§ 14.

L'Assemblée générale désigne pour une année la Commission de Revision, composée de trois membres et de deux candidats pour

l'inspection de la caisse et d'autres comptes et la surveillance de l'activité de l'Administration générale.

§ 15.

La Société de la Croix Rouge de la R. S. S. d'Arménie est reconnue comme personne juridique, représentée par l'Administration générale qui gère toutes les affaires de la Société aux termes de ces statuts et des décisions de l'Assemblée générale.

§ 16.

L'Administration générale est composée au moins de 11 membres et de 5 candidats qui remplacent les membres en démission. L'Administration générale est élue pour le délai d'un an. Les membres en démission peuvent être réélus.

Est membre de l'Administration générale le Commissaire de la Santé Publique ou son représentant.

§ 17.

L'Administration générale a le droit de s'adjoindre, pour renforcer son personnel, pas plus de 4 nouveaux membres, par cooptation.

§ 18.

Les réunions de l'Administration générale

sont convoquées au moins une fois par deux mois. Elles peuvent avoir lieu plus souvent selon la décision de la présidence ou sur la demande de cinq membres de l'Administration.

§ 19.

Les décisions da l'Administration. générale sont considérées réglementaires si à la réunion ont participé au moins la moitié des membres de l'Administration générale.

§ 20.

L' Administration générale désigne entre ses membres sa présidence composée: du président, de deux rempiaçants, du secrétaire et du trésorier.

La présidence constitue l'organe exécutif de l'Administration générale; pour les affaires pressantes elle a le droit de faire tout ce qu'elle trouve nécessaire à condition d'en faire le rapport à la réunion plénière de l'Administration générale.

§ 21.

L' Administration générale peut désigner à l' Etranger des représentants de la Société et des délégués qui se conforment aux instructions de l'Administration générale et sont responsables devant elle.

§ 22.

Les sociétés arméniennes de la Croix Rouge organisées à l'Etranger peuvent être considérées comme organisations auxiliaires de la Sociétéde la Croix Rouge de la R. S. S. d'Arménie, sur décision spéciale pour chaque cas de l'Administration générale.

§ 23.

La Société a dans les provinces ses sections qui sont organisées sur les mêmes base et qui se conforment aux principes du centre. L'Administration d'une section est composée de 3-5 membres, avec deux remplaçants; la commission de revision, de 3 membres et de deux remplaçants.

§ 24.

Dans le cas de liquidation d'une des sections tout son dossier et tous ses biens—meubles et immeubles—sont transmis à l'Administration générale. Tout est de nouveau rendu à la même section, si dans l'espace d'un an elle recommence son activité.

§ 25.

Les administrations des sections, après avoir été reconnues par lAdministration général, agissent d'après les décisions de l'assemblée lo-

cale et conformément aux instructions de l'Administration générale.

§ 26.

Les ressources qui se trouvent à la disposition de l'Administration générale et des administrations locales sont divisées en catégories suivantes:

a) sommes destinées aux dépenses courantes de la société;

b) capital de réserve pour les besoins de temps de guerre;

c) fonds d'assistance destiné aux invalides et.

d) sommes spéciales et offrandes destinées aux buts spéciaux, qui ne seront dépensées que pour les buts susmentionnés.

§ 27.

Les administrations locales envoient 25 % de toutes leurs recettes, à l'exception des sommes qui ontété offertes exclusivement pour des oeuvres locales, à l'administration générale pour les besoins généraux de la Société.

§ 28.

Les capitaux de l'Administration générale et des Administrations locales sont déposés à la Banque d'Etat ou ses succursales en dépôt ou en compte courant. Ces sommes peuvent être ertirées au moyen des chèques qui portent les

signatures du président ou de son remplaçant et du trésorier

§ 29.

L'Administration générale et les administrations locales sont tenues à présenter à la fin de chaque année, au moins un mois avant la réunion de l'Assemblée générale, le compte-rendu détaillé, pécuniaire et matériel, aux commissions de revision, qui le présentent, à leur tour, en y joignant leur conclusion, à l'Assemblée générale.

§ 30.

Les administrations des sections présentent leur compte-rendu annuel, avec la conclusion de l'Assemblée générale etcelle de la commission de Revision, à l'Administration générale pas plus tard que le 1-er Février de l'année suivante.

§ 31.

Les administrations locales, ainsi que toutes les institutions qui sont subordonnées à l'Administration générale, sont considérées dissolues si dans le courant de deux mois après le délai fixé elle n'ont pas présenté leur compte-rendu; dans ce cas le § 24 de ces statuts est appliqué.

§ 32.

L'Administration générale rédige le compte-rendu général de son activité et de l'activité des

sections, le rend public dans une édition spéciale ou dans la presse.

§ 33.

Le blason de la Société de la Croix Rouge de la R. S. S. d'Arménie est représenté sur un fond blanc, par une croix rouge rectangulaire et réguliaire. Le droit d'usage de ce blason appartient en Arménie exclusivement à la Société de la Croix Rouge de la R. S. S. d'Arménie, dont l'Administration générale se réserve le droit d'en permettre l'usage aux institutions et aux personnes qui se mettent au service de la Société.

§ 34.

La Société possède son sceau qui porte le blason susmentionné avec l' inscription: «Société de la Croix Rouge de la R. S. S. d'Arménie» et avec l'indication de l'Administration générale ou de l'Administration de la section.



ՎՐԻՊԱԿ

Հոդված	Տպված է	պետքէ լինի
23	*4—5*	*3—5*
28	*յեղանակով*	*քանակով*

ՀՀ Ազգային գրադարան
NL0835966

Ч 2(Ц92
375

Գրատեսվաւ № 1069. տիրաժ 500 որ. պատվեր № 2362